

## Ուրվագիր վեցերորդ

### Աստծու հետ մեկ լինելու սկզբունքը, ինչպես բացահայտված է Երեմիա մարգարեի գրքում

Գրվածքների ընթերցում. Ծնդ 2:8-9, 16-17, Երմ 2:13, 15:16, 19, 23:5-6, 31:31-34,  
40:5-6, 13-14

**I. Աստծու ցանկությունը, որ մարդու հետ մեկ լինի, և մարդը մեկ լինի Իր հետ,  
կարելի է տեսնել այն բանից, որ Աստված ու մարդը նման են իրենց պատկերով  
և նմանությամբ.**

- Ա. Աստված Իր ստեղծագործության ժամանակ «մարդու տեսակ» չստեղծեց.  
այն, ինչ Աստված ստեղծեց, Իր տեսակի պես էր, այսինքն՝ Աստծու  
տեսակի. Աստված մարդուն ստեղծեց կյանքի շնչի միջոցով, որը դարձավ  
հոգի, որպեսզի մարդը շփվի Նրա հետ և ընդունի Նրան՝ Ծնդ 1:24-26, 2:7:
- Բ. Ծնդ 18:2-13-ում երեք մարդ հայտնվեց Աբրահամին. այս մարդկանցից  
մեկը Քրիստոսն էր՝ Եհովան, իսկ մյուս երկուսը հրեշտակներ էին (19:1).  
սա նշանակում է, որ Իր մարմնացումից երկու հազար տարի առաջ  
Աստված հայտնվեց որպես մարդ, երբ այցելեց Իր ընկեր Աբրահամին՝  
Բ Մց 20:7, Եսյ 41:8, Հկր 2:23:
- Գ. Աստծու հրեշտակը (Աստված՝ Եհովան, Աստծու մարդը՝ Քրիստոսը)  
հայտնվեց Մանուելին և նրա կնոջը նախքան Քրիստոսի մարմնացումը՝  
Դտվ 13:3-6, 22-23:
- Դ. Դանիելը տեսավ Քրիստոսի՝ որպես Մարդու Որդու տեսությունը նախքան  
Քրիստոսի մարմնացումը. ըստ Դնլ 7:13-14-ի՝ Դանիելը տեսավ, որ Մարդու  
Որդին երկնքի ամպերով գալիս է, ու Նա եկավ մինչև իսկ Օրերով  
Հիմավորցի՝ հավիտենության Աստծու մոտ, ու Նրան քերեցին Նրա մոտ.  
Նրան տիրակալություն տրվեց, փառք ու թագավորություն, որպեսզի բոլոր  
ժողովուրդները, ազգերը և լեզուները ծառայեն Նրան. Նրա տիրակա-  
լությունը հավիտենական տիրակալություն է, որը չի անցնի, իսկ Նրա  
թագավորությունը թագավորություն է, որը չի ոչնչացվի:
- Ե. Աղամը Քրիստոսի նախատիպ էր, նախապատկեր՝ Հռմ 5:14:
- Զ. Քրիստոսն անտեսանելի Աստծու պատկերն է՝ Կդս 1:15:
- Է. Խոսքը (Աստված) մսեղի դարձավ (Հվի 1:14), ով եկավ մեղքի մսեղիի  
նմանությամբ (Հռմ 8:3) և չուներ մսեղիի մեղքը (Բ Կրթ 5:21, Երր 4:15):
- Ը. Քրիստոսը, ով Աստծու կերպարանքով գոյություն ունի, Իր մարմնացմամբ  
ստրուկի կերպարանք ընդունեց՝ մարդկանց նմանությամբ դառնալով և  
տեսրով որպես մարդ գտնվելով՝ Փլպ 2:6-8:
- Թ. Ստեփանոսը տեսավ երկինքները բացված և Մարդու Որդուն՝ Քրիստոսին,  
Աստծու աջ կողմը կանգնած (Գրծ 7:56). սա ցույց է տալիս, որ Քրիստոսը  
երկինքներ համբարձվելուց հետո էլ նախկինի պես Մարդու Որդին է (տես  
Օրիները 97):
- Ժ. Մտք 26:64-ում Տեր Հիսուսն ասաց. «Տեսնելու եք Մարդու Որդուն՝  
Զորության [Աստծու] աջ կողմը նստած և երկնքի ամպերի վրա գալիս». սա  
ցույց է տալիս, որ երբ Տեր Հիսուսը վերադառնա, նախկինի պես Մարդու  
Որդին կլինի:

- ԺԱ.** Հոմ 8:29-ում Պողոսն ասում է, որ նրանց, ում Աստված նախապես ճանաչեց (մեզ՝ հավատացյալներիս), նաև նախասահմանեց Իր Որդու պատկերին կերպարանակից լինելու, որպեսզի Նա Անդրանիկը լինի բազում եղբայրների մեջ. այն բանի շնորհիվ, որ Նա Իր հարությամբ մեզ դարձրեց Իր բազում եղբայրները, մենք դարձանք նոր տեսակ՝ «Աստվածամարդու տեսակ»:
- ԺԲ.** Բ Կրթ 3:18-ն ասում է. «Մենք բոլորս ծածկոցը հանած երեսով, ինչպես հայելի, Տիրոց փառքին հայելով և այն անդրադառնելով, նույն պատկերին ենք փոխակերպվում փառքից փառք, ինչպես որ Տեր Հոգուց». Հոմ 12:2ա-ն ասում է, որ մենք փոխակերպվում ենք մեր մտքի նորոգումով:
- ԺԳ.** Փլա 2:15-ն ասում է, որ մենք անմեղադրելի և անխարդախ ենք, Աստծու անարատ զավակներ փշացած ու այլասերված սերնդի մեջ, որի մեջ շորում ենք ինչպես լուսատուներ աշխարհում:
- ԺԴ.** Տեր Հիսուս Քրիստոսը մեր նվաստության մարմինը կայլակերպի այնպես, որ այն կերպարանակից լինի Նրա փառքի մարմնին՝ ըստ Իր գործողության, որով Նա ի վիճակի է անգամ ենթարկելու Իրեն ամեն բան՝ 3:21:
- ԺԵ.** Երբ Քրիստոսը հայտնի դարձվի, մենք լիովին, կատարելապես ու բացարձակապես Նրա նման կլինենք, որովհետև Նրան կտեսնենք, ինչպիսին որ Նա է՝ Ա Հվի 3:2բ:
- ԺԶ.** Այս ամենը կավարտունանա Նոր Երուսաղեմում. Հյու 4:3-ն ասում է. «Նա [Աստված], ով նստած էր, տեսրով հասպիս քարի.... նման էր». Աստծու՝ զահին Նստողի տեսքը հասպիս նման է:
- ԺԷ.** Հյու 21-ի համաձայն՝ Նոր Երուսաղեմի լույսը մի խիստ թանկագին քարի նման է, որպես թե հասպիս քարի (խ. 11թ). Արա պարսպի շարվածքը հասպիս է, իսկ նրա պարսպի առաջին հիմքը նույնպես հասպիս է (խ. 18ա, 19).
1. Ի վերջո Աստված և մարդ, մարդ և Աստված հասպիսի տեսք են ունենալու. ուստի Աստվածաշնչի եզրափակումը և ավարտունությունը Նոր Երուսաղեմն է՝ աստվածայնությունը՝ մարդկայնության հետ միաձուլված. աստվածայնությունը դառնում է մարդկայնության բնակատեղը, իսկ մարդկայնությունը դառնում է աստվածայնության տունը:
  2. Այս քաղաքում Աստծու փառքը վառ ու սքանչելի կերպով հայտնի է դարձվում մարդու մեջ. իհմա մենք աստվածանալու գործընթացում ենք, որպեսզի դառնանք Նոր Երուսաղեմը և կրենք Աստծու՝ հասպիս նույն տեսքը՝ խ. 11, 23:
  3. Այս դարաշրջանի ավարտին մենք ուսուցանում և քարոզում ենք այն ճշմարտությունը, որ Աստված դարձավ մարդ, որպեսզի մարդուն դարձնի Աստված՝ նույնը, ինչ Ինքն է կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ. այս ճշմարտությունը լսելը մեծ օրինություն է:
  4. Ի վերջո Աստվածամարդիկ կլինեն հաղթողները՝ Երուսաղեմի ներսի Սիոնը. եթե մեր ամենօրյա կյանքի բոլոր մանրամասներում Աստվածամարդու ապրելակերպ ունենանք, դա մեզ կհասցնի նոր արթնության, որ պատմության մեջ երբեք չի եղել, և դա կավարտի այս դարաշրջանը՝ Սույն 48:2 և ծրագիր 1:

## II. Երեմիայի Գիրքը ցույց է տալիս Աստծու հետ մեկ լինելու սկզբունքը.

- Ա. Աստծու հետ մեկ լինելու սկզբունքը, որ կյանքի ծառի սկզբունքն է՝ ի հակադրություն բարու և չարի գիտության ծառի, տեսնում ենք Երմ 2:13-ում, որտեղ բացահայտվում են Աստծու ժողովորի երկու հիմնական մեղքերը.
1. Առաջին մեղքը Եփովային՝ որպես կենդանի ջրերի ակունքի՝ սկզբնադրյուրի, թողնելն էր. երկրորդ մեղքը կոտրված ջրամբարներ փորելն էր, որոնք ջուր չեն կարող պահել:
  2. Աստվածաշնչի սկզբունքն այն է, որ Աստված չի ուզում՝ Իր ընտրյալ մարդիկ իրենց՝ որպես իրենց աղբյուրից բացի որևէ այլ բան ընդունեն. մարդուն կյանքի ծառի առջև դնելով, որ խորհրդապատկերում է Աստծուն՝ որպես կյանքի, Աստված ցույց էր տալիս, որ Ինքն ուզում է՝ մարդը հաղորդ լինի կյանքի ծառին, ոչ թե որևէ այլ բանի. կյանքի ծառին հաղորդ լինել նշանակում է ընդունել Աստծուն՝ որպես մեր եզակի սկզբնադրյուրի, որպես մեր ամեն ինչի սկզբնադրյուրի՝ Ծնդ 2:8-9:
  3. Երկրորդ մեղքը կապված էր այն բանի հետ, որ Աստծու մարդիկ ոչ թե Աստծուն էին վստահում, այլ իրենց, որպեսզի իրենց վայելքի համար իրենք իրենցով ինչ-որ բանի հասնեին. մեղքն այն է, որ թողնում ենք Աստծուն և մեզնով ու մեզ համար ինչ-որ բան անում:
  4. Այս երկու հիմնական մեղքերը մեզ ցույց են տալիս կյանքի ծառը, որ խորհրդապատկերում է Աստծուն, և բարու և չարի գիտության ծառը, որ խորհրդապատկերում է Սատանային (Խս. 8-9, 16-17). Խրայելը կյանքի ծառից շեղվել էր դեպի գիտության ծառը, կենդանի ջրերի ակունքից՝ դեպի ջրամբարները (կուտքերը):
- Բ. Աստված մարդուն դրեց կյանքի ծառի առջև՝ մատճանշելով մարդու հետ մեկ լինելու Իր ցանկությունը, այսինքն՝ լինելու մարդու կյանքը, կենսամատակարարումը և ամեն ինչը՝ Խս. 8-9.
1. Կյանքի ծառը խորհրդապատկերում է խաչված (որ ենթադրվում է ծառով՝ որպես փայտի կտորով՝ Ա Պտ 2:24) և հարուցանված (որ ենթադրվում է Աստծու կյանքով՝ Հփ 11:25) Քրիստոսին՝ որպես մեր կերակրի համար Աստծու ողջ հարստության մարմնավորման:
  2. Կյանքի ծառն ուտելը, այսինքն՝ Քրիստոսին՝ որպես կենսամատակարարման, վայելելը պետք է մեր եկեղեցական կյանքում առաջնային կարևորության բան լինի. Քրիստոսին ընդունել՝ Նրան ուտելով, նշանակում է օրգանապես և նյութափոխանակորեն Նրան յուրացնել մեր էռթյան մեջ, որպեսզի Նա միաձուլվի մեզ հետ՝ Հյտ 2:7, Հփ 6:57, 63.
  - ա. Խոսքերը, որոնք Տերն ասում է, հոգի են և կյանք. սա ցույց է տալիս, որ Տիրոջ ասած խոսքերը կյանքի Հոգու մարմնավորումն են՝ խ. 63.
    - 1) Նա հիմա հարության մեջ եղող կենդանարար Հոգին է (Ա Կրթ 15:45բ), իսկ Հոգին մարմնավորված է Նրա խոսքերում:
    - 2) Երբ ամեն աղոքքի և խնդրվածքի միջոցով ընդունում ենք Նրա խոսքերը (Եփս 6:17-18)` մեր հոգին վարժելով, մենք ստանում ենք Հոգուն, ով կյանք է:
  - բ. Քրիստոսին ուտել նշանակում է ուտել Նրա խոսքերը, ընդունել Նրա խոսքերը, որոնք կյանքի Հոգու մարմնավորումն են, վարժելով մեր հոգին՝ Երմ 15:16, Եփս 6:17-18, Ա Պտ 2:2, Եբր 5:13-14, Եղկ 3:1-4:

**III. Աստծու խոսքն ընդունելու, ստանալու և պահելու համար մենք պետք է Նրա հետ բացարձակապես մեկ լինենք.**

Ա. Գողողյայի դեպքը մի մարդու դեպք է, ով մեկ չէր Աստծու հետ. թեև Գողողյան հավատարմորեն հոգում էր Երեմիայի՝ Աստծու մարզարեի համար, նա Տիրոջ խոսքը չէր փնտրում, որովհետև այդպիսի սովորություն չուներ՝ Երմ 40:5-6, 13-14.

1. Գողողյան Աստծուն՝ որպես իր սկզբնաղբյուրի չէր ընդունում, որպեսզի Նրա հետ մեկ լիներ և ընդուներ այն, ինչ բխում էր Նրանից. Եթե նա այնպիսի անձ լիներ, ով Աստծու հետ մեկ էր, ապա նրա առաջին անելիքը կլիներ Աստծու խոսքն ընդունելը:
2. Աստծու խոսքը՝ որպես Նրա մտքի, Նրա կամքի, Նրա սրտի ցանկության և Նրա հաճության արտահայտություն, ընդունելու, ստանալու և պահելու համար պետք է բացարձակապես մեկ լինել Աստծու հետ՝ Նրան վատահելով, ապավինելով և մեր «ես»-ից բխող ոչ մի կարծիք չունենալով՝ հմնտ Բ Կրթ 1:8-9 և խ. 12, ծրգ 2:
3. Աստվածաշնչի, հատկապես Նոր Կտակարանի սկզ- բունքն այն է, որ Աստված Իրեն բաց է անում մեզ համար, որպեսզի մտնենք Իր մեջ, ընդունենք Իրեն և Իր հետ մեկ դառնանք. այդժամ Նա մեր մեջ կլինի, իսկ մենք կլինենք Նրա մեջ՝ Նրան ընդունելով որպես մեր ամեն ինչը՝ 15:4-5, Ա Հվե 2:28, 3:24:
4. Առաջին բանը, որ կընդունենք, Նրա խոսքն է, որպեսզի արտահայտենք Նրա միտքը, Նրա կամքը, Նրա սրտի ցանկությունը և հաճությունը. մենք չենք հոգա մեր կարծիքների կամ նախասիրությունների համար. այսպես մենք դառնում ենք Նրա խոսափողն ու Նրան բարբառում ուրիշների համար, որպեսզի նրանք մատակարարում ստանան՝ Երմ 1:6-9:

Բ. Տերը Երեմիային ասաց. Եթե բանկարժեքն անարժեքից զատես, իմ բերանի պես կլինես»՝ 15:19, 3:29, հմնտ խ. 16.

1. Անհրաժեշտ է, որ մեր սրտի աշքերը լուսավորվեն, որպեսզի տեսնենք Քրիստոսի՝ որպես Իր հավատացյալների համար թանկարժեքության գերազանցությունը, գերակայությունը, անհամեմատելի արժեքը, որպեսզի շահենք Քրիստոսին՝ Նրանից զատ ամեն բան կորուստ համարելով՝ Փլա 3:7-8, Ա Պտ 2:7, հմնտ խս. 4, 6:
2. Մենք պետք է Տիրոջ խոսքերն ավելի բանկ համարենք, քան մեր բաժին կերակուրը՝ ճաշակելով Տիրոջն Իր խոսքում որպես բարի երկրի իրականության, որտեղ սանցող կաք ու բարմացնող մեղք է հոսում, որպեսզի Աստծու մարդկանց բաշխենք նրանց լիակատար փրկության համար՝ Հոր 23:12, Ա Պտ 2:2-5, Սղմ 119:103, Երկ Օր 8:8, Երգ 4:11ա:
3. Մենք պետք է Տիրոջ խոսքերն ավելի բանկ համարենք, քան բոլոր երկրային զանձերը, որպեսզի կարողանանք Աստծու պատգամները խոսել (Աստծու խոսելը, Աստծու բարբառելը, որն աստվածային հայտնություն է պարունակում), որպեսզի Քրիստոսի անքննելի հարստությունը՝ որպես Աստծու տարատեսակ շնորհը, բաշխենք բոլոր սրբերին՝ Սղմ 119:72, 9-16, Եփս 3:8, Բ Կրթ 6:10, Ա Պտ 4:10-11:

**IV. Խրայելի ձախողումների և պարտությունների գաղտնիքն այն էր, որ նրանք կորցրել էին Աստծու ներկայությունը և այլևս Աստծու հետ մեկ չէին (հմնտ Հս 7:3-4, 9:14). մենք պետք է միշտ մեկ լինենք մեր Աստծու հետ, ով ոչ միայն մեր**

**միջավայրում է, այլև մեր մեջ, ինչը մեզ դարձնում է Աստծու հետ եղող մարդիկ՝ Աստվածամարդիկ.**

- Ա. Լինելով Աստվածամարդիկ՝ մենք պետք է կիրարկենք Տիրոջ հետ մեկ լինելը՝ քայլելով Նրա հետ, ապրելով Նրա հետ ու մեր ողջ էությամբ լինելով Նրա հետ (Հոմ 8:4, Բ Կրթ 2:10, Գյոտ 5:16, 25). սա է որպես քրիստոնյաներ քայլելու, որպես Աստծու զավակներ ճակատամարտելու և Քրիստոսի Մարմինը կառուցելու ճանապարհը. եթե Տիրոջ ներկայությունն ունենք՝ Նրա հետ մեկ լինելով, ապա ունենք իմաստություն, խորաքափանցություն, կանխատեսություն և ամեն բանի ներքին գիտություն. Տիրոջ ներկայությունը մեզ համար ամեն ինչ է:
- Բ. Աստծու դեմ մեղանչելու առնչությամբ Իսրայելի զավակների համառությունը կապված էր նրանց՝ Աստծու հետ մեկ չլինելու հետ (Երմ 42:1–43:2). եթե նրանք Աստծու հետ մեկ լինենին, Աստծու խոսքը կընդունեին ու կճանաչեին Նրա սիրտը, Նրա բնությունը, Նրա միտքն ու Նրա նպատակը. բացի դրանից՝ ինքնարերաբար կապուին Նրան ու Նրանով կկազմվեին, որպեսզի երկրի վրա Նրա վկայությունը լինենին:
- Գ. Ովքեր Աստծու հետ մեկ չեն, Նրա կամքն ու հաճությունը չեն ընդունում, այլ իրենց կարծիքներն են արտահայտում և իրենց նախասիրություններին ձգտում. այս բանն անել նշանակում է բողնել Աստծուն՝ որպես կենդանի ջրերի աղբյուրի, ակունքի և կոտրված ջրամբարներ փորել, որոնք չեն կարող ջուր պահել՝ 2:13:
- V. **Աստծու հետ մեկ լինելու համար մեզ անհրաժեշտ է, որ Քրիստոսը՝ որպես Դավիթի Ընձյուղը, լինի մեր վրկագնումը և արդարացումը. սա Եռամեկ Աստծուն բերում է մեր մեջ՝ լինելու մեր կյանքը, մեր ներքին կյանքի օրենքը, մեր ունակությունը և մեր ամեն ինչը, որպեսզի Իրեն բաշխի մեր էության մեջ՝ իրազործելու համար Իր տնտեսությունը. սա նոր ուխտն է (31:33). ի վերջո մենք կճանաչենք Աստծուն, կապրենք Աստծուն և կդառնանք Աստված կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ, որպեսզի դառնանք Իր ընդհանրական արտահայտությունը՝ որպես Նոր Երուսաղեմը՝ 23:5-6, 31:31-34, Հյու 21:2:**